Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 236-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս 3

2. Ամփոփագիր 4

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ 4

4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ 4

5. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր 8

6. Հետհսկողական գործընթաց 11

1. Ներածական մաս

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. օգոստոսի 7-ի թիվ 146-Ա որոշում, 2020թ. սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշում, 2020թ. նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշում
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն
Հաշվեքննության առարկայի չափանիշները	ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի թիվ 254-Ն հրաման
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020թ. օգոստոսի 17-ից մինչև 2020թ. հոկտեմբերի 31-ը ներառյալ՝ հաշվեքննությունը կասեցվել է 2020թ. սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշմամբ, և վերսկսվել է 2020թ. նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշմամբ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն, իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգեր:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

2. Ամփոփագիր

ՀՀ դատական դեպարտամենտից ստացված ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանով սահմանված առաջին կիսամյակի համար կազմված Ձև Հ-8 հաշվետվությունների պատճենների և ՀՀ դատական դեպարտամենտի 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների համադրման արդյունքում պարզվեց, որ առկա են արտացոլված ցուցանիշների միջև շեղումներ:

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ

Հաշվեքննության ընթացքում ստացվել են բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն:

4.Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ

ՀՀ դատական դեպարտամենտի համար ՀՀ 2020թ.-ի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է՝ 12,662,335.6 հազ. դրամ: Առաջին վեց ամիսների պլանը կազմել է՝ 5,416,583.7 հազ.դրամ, ճշտված պլանը՝ 5,359,079.2 հազ դրամ, ֆինանսավորումը՝ 4,524,188.34 հազ. դրամ, փաստը՝ 4,516,304.17 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 5.455.154.75 հազ. դրամ:

2019թ-ին տարեկան պլանը կազմել է 12,380,667.6 հազ. դրամ, 2019թ.-ի առաջին վեց ամիսների պլանը և ճշտված պլանը՝ 5,193,455.9 հազ.դրամ, ֆինանսավորումը՝ 4,325,592.13 հազ. դրամ, փաստը՝ 4,319,483.71 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 5,290,838.05 հազ. դրամ: 2020 թվականի առաջին կիսամյակում 2019թ.-ի համեմատ փաստը ավելացել է 196,820.46 հազ. դրամով կամ 4,6%-ով:

Նշանակալի հաշիվներ են ընտրվել՝ 411100 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ, որի մասով առաջին վեց ամիսների համար պլանով և ճշտված պլանով նախատեսվել է՝ 3,322,697.6 հազ.դրամ, ֆինանսավորումը՝ 3,180,190.12

հազ. դրամ, փաստը՝ 3,172,385.16 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 3.802.086.89 հազ. դրամ, 411200 Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ, որի մասով առաջին վեց ամիսների համար պլանով նախատեսվել է՝ 784,705.9 հազ.դրամ, ճշտված պլանով՝ 653,921.4, ֆինանսավորումը և փաստը՝ 653,921.38 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 810.862.39 հազ. դրամ, 411300 Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրումներ, որի մասով առաջին կիսամյակի համար պլանով և ճշտված պլանով նախատեսվել է՝ 198,023.1 հազ.դրամ, ֆինանսավորումը, փաստը և փաստացի ծախսը՝ 198,023.1 հազ.դրամ:

Ներկայացված տեղեկատվության համաձայն 2020թ. գնումների պլանից մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ներառյալ կազմակերպված թվով 257 գնման ընթացակարգերի շրջանակներում կնքվել է թվով 277 պայմանագիր ընդհանուր 1,150,529.8 հազ. դրամ պայմանագրային արժեքով: Տվյալ պայմանագրերի շրջանակներում կատարողականի ընդհանուր գումարը կազմել է 532,501.0 հազ. դրամ, իսկ վճարված գումարը՝ 412,395.9 հազ. դրամ:

ՀՀ դատական դեպարտամենտ 2020 թվականի 1-ին կիսամյակ

Աղյուսակ 1

Ծրագիր		2020 թ. 1-ին կիսամյակ	2019 թ. 1-ին կիսամյակ		
		Փաստ	Փաստ	Տարբերություն	Տարբերություն %
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	4 516 304	4 319 484	196 820	4,6%
1080-11001	Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովում և Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատական իշխանության անկախության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացում	1 032 442,08	1 023 032,34	9 409,74	0,9
1080-11002	ՀՀ Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	286 235,68	294 583,73	-8 348,05	-2,8
1080-11003	ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	198 105,50	190 706,36	7 399,14	3,9
1080-11004	ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	211 877,01	218 102,25	-6 225,24	-2,9

1080-11005	ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	121 130,56	125 168,37	-4 037,81	-3,2
1080-11006	ՀՀ վարչական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վարչական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	270 240,17	269 379,29	860,88	0,3
1080-11007	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	874 890,10	836 554,06	38 336,04	4,6
1080-11008	ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	100 243,37	91 824,23	8 419,14	9,2
1080-11009	ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	168 919,97	149 584,07	19 335,90	12,9
1080-11010	ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	138 775,16	128 970,79	9 804,37	7,6
1080-11011	ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	144 754,21	132 753,70	12 000,51	9
1080-11012	ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	172 536,76	175 952,85	-3 416,09	-1,9
1080-11013	ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	145 813,80	142 438,63	3 375,17	2,4

1080-11014	ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	173 693,11	169 560,34	4 132,77	2,4
1080-11015	ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	119 415,06	117 551,08	1 863,98	1,6
1080-11016	ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	100 702,88	106 336,77	-5 633,89	-5,3
1080-11017	ՀՀ Սնանկության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Սնանկության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	155 423,51	116 616,13	38 807,38	33,3
1080-11018	Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդի ձևավորում և կառավարում	11237,13	1 130,86	10 106,27	893,7
1080-31001	Բարձրագույն դատական խորհրդի տեխնիկական հագեցվածության բարելավում	25788,87	29237,86	-3 448,99	-11,8
8996-11001	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	0		0,00	
1015-12001	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	64079,24	0	64 079,24	100
	8996-11001	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ			
1015	Սոցիալական փաթեթների ապահովում				
	1015-12001	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում			

5. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր

1. ՀՀ դատական դեպարտամենտից ստացված ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանով սահմանված առաջին կիսամյակի համար կազմված Ձև Հ-8 հաշվետվությունների պատճենների և

ՀՀ դատական դեպարտամենտի 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների համադրման արդյունքում պարզվեց.

a. ՀՀ Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում միջոցառման վրա կատարվող ծախսի տարեկան ճշտված պլանի ցուցանիշն ավել է 96,0 հազ. դրամով, հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի ցուցանիշն ավել է 48,1 հազ. դրամով, փաստի ցուցանիշը պակաս է 0,01 հազ. դրամով, իսկ հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստի տարբերության ցուցանիշն ավել է 48,11 հազ. դրամ:
b. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում միջոցառման վրա կատարվող ծախսի հաշվետու ժամանակահատվածի պլանի ցուցանիշը պակաս է 6,444,7 հազ. դրամով, հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստի տարբերության ցուցանիշներն ավել է 12,0 հազ. դրամ:
c. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում միջոցառման վրա կատարվող ծախսի հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստի տարբերության ցուցանիշներն ավել է 196,5 հազ. դրամ:
d. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում միջոցառման վրա կատարվող ծախսի տարեկան ճշտված պլանի ցուցանիշն ավել է 1,012,6 հազ. դրամ, հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստի տարբերության ցուցանիշներն ավել է 506,4 հազ. դրամ:
e. ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության

իրավունքի ապահովում միջոցառման վրա կատարվող ծախսի տարեկան ճշտված պլանի ցուցանիշն ավել է 176,4 հազ. դրամ:

f. ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում միջոցառման վրա կատարվող ծախսի հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստի տարբերության ցուցանիշներն ավել է 4,323,2 հազ. դրամ:

g. ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում միջոցառման վրա կատարվող ծախսի տարեկան ճշտված պլանի ցուցանիշն ավել է 313,2 հազ. դրամ, իսկ հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստի տարբերության ցուցանիշներն ավել է 104,4 հազ. դրամ:

h. ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում միջոցառման վրա կատարվող ծախսի տարեկան ճշտված պլանի ցուցանիշն ավել է 4,777,6 հազ. դրամ:

i. ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում միջոցառման վրա կատարվող ծախսի տարեկան ճշտված պլանի ցուցանիշն ավել է 192,0 հազ. դրամ, հաշվետու ժամանակահատվածի պլանի ցուցանիշն ավել է 27,218,9 հազ. դրամ, իսկ հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստի տարբերության ցուցանիշներն ավել է 29,666,35 հազ. դրամ:

j. ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում միջոցառման վրա կատարվող ծախսի տարեկան ճշտված պլանի ցուցանիշն ավել է 168,0 հազ. դրամ:

k. ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում միջոցառման վրա կատարվող ծախսի հաշվետու ժամանակահատվածի պլանի ցուցանիշը պակաս է 3,214,7 հազ. դրամ:

l. ՀՀ Սնանկության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Սնանկության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում միջոցառման վրա կատարվող ծախսի հաշվետու ժամանակահատվածի պլանի ցուցանիշը պակաս է 4,801,8 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների ծախսային ծրագրերի գծով միջծրագրային վերաբաշխումների, միևնույն ծրագրի միջոցառումների միջև վերաբաշխումների, միջեռամսյակային վերաբաշխումների և ներքին հոդվածային վերաբաշխման մասին» 18.06.2020 թվականի թիվ 4 ծանուցմամբ ներկայացված փոփոխությունները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվել են 2020 թվականի հունիսի 23-ին, իսկ համաձայն ՀՀ սահմանադրության 175-րդ և ՀՀ դատական օրենսգրքի սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածների՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից (որպես ԲԳԿ) նախահաշիվները հաստատվել են 2020 թվականի հուլիսի 13-ի թիվ ԲԴԽ-44-Ո-102 որոշմամբ, որի արդյունքում Դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումների կողմից կազմված հաշվետվություններում վերոնշյալ փոփոխությունները չեն ներառվել, իսկ Դատական դեպարտամենտի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն էլեկտրոնային եղանակով ներկայացված հաշվետվություններում վերոնշյալ փոփոխությունները ներառվել են և շեղումներ չկան:

6.ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Թիվ	Առաջարկություններ	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
1	ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մասով 80 անձի հաշվարկվել և վճարճել է աշխատավարձ և հավելավճար՝ 56,041.5 հազ.դրամ ընդհանուր գումարով, սակայն փաստացի ծախսը կազմել է 58,308.43 հազ.դրամ գումար: Առկա է 2,266.93 հազ.դրամ գումարի չափով անհամապատասխանություն՝ դեպարտամենտի կողմից ներկայացված և բյուջեում արտացոլված տեղեկատվությունների մեջ:	*«Ընդունված է»*	*«Կատարված է»*	2,266.93 հազ. ՀՀ դրամ շեղումն արդեն իսկ վերահաշվարկվել է 2020թ.-ի պետական բյուջեի կատարման մասին առաջին կիսամյակի հաշվետվության մեջ և դեռևս 14.07.2020 թվականին ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Դատական դեպարտամենտում 2020 թվականի բյուջեի վեց ամիսների կատարման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության արձանագրության վերաբերյալ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի օգոստոսի 7-ի թիվ 146-Ա որոշման հիման վրա Դատական դեպարտամենտում 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) «անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ» բաժնում 1080 ծրագրի միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների վերաբերյալ Ձև Հ-8 հաշվետվությունների մեջ արձանագրվել են շեղումներ, որոնց պատճառը կայանում է հետևյալում.

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների ծախսային ծրագրերի գծով միջծրագրային վերաբաշխումների, միևնույն ծրագրի միջոցառումների միջև վերաբաշխումների, միջեռամսյակային վերաբաշխումների և ներքին հոդվածային վերաբաշխման մասին» 18.06.2020 թվականի թիվ 4 ծանուցմամբ ներկայացված փոփոխությունները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվել են 2020 թվականի հունիսի 23-ին, իսկ համաձայն ՀՀ սահմանադրության 175-րդ և ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածների՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից (որպես ԲԳԿ) նախահաշիվները հաստատվել են 2020 թվականի հուլիսի 13-ի թիվ ԲԴԽ-44-Ո-102 որոշմամբ, որի արդյունքում Դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումների կողմից կազմված հաշվետվություններում վերոնշյալ փոփոխությունները չեն ներառվել, իսկ Դատական դեպարտամենտի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն էլեկտրոնային եղանակով ներկայացված հաշվետվություններում վերոնշյալ փոփոխությունները ներառվել են և շեղումներ չկան: